

ըմպելիներով եւ նուազ... Այսուհետեւ
փեսացուն առելի իրաւամբ ստէպ ապցելու-
թեան կ'երթայ նշանածցուն տունը, տա-
նելով միասին պէս պէս նուէրներ եւ սխա-
ղի փունջեր, ու կը յանձնէ ծնողաց, ա-
ռանց կարենալու օրիորդին հետ խօսակ-
ցել կամ նոյնիսկ տեսնուիլ, վասնզի ուրիշ
տներէ մը կը կատարէ բոլոր պատուասի-
րութիւնները: Եւ հարսնցուն բոլորովին
կը զգուշացուի նոյնիսկ դռներէն ու պա-
տուհաններէն դուրս նայիլ, իբրեւ ամօթ-
խածութիւն, մանաւանդ եթէ տուններին
հասարակաց բանուկ ճամբուն վրայ կը
նայի:

Նշանտուքէն վերջ, ուրիշ օր մը հար-
սընցուն մաղերուն հինա կը դրուի որ
կարմրին ու փայլին, նոյնպէս երկու ձեռ-
քերուն 10 մատները:

Փեսացուն՝ մէկ նկոյթը միայն:
Ձեմ համարձակիր նշանտուքի բոլոր
արարողութեանց եւ հանդէսներուն մէջ
մտնել, որովհետեւ, դեռ մանուկ հասա-
կիւ հեռացած ըլլալով Արարիկէն՝ ուշ
դրած չեմ եւ զիտցածս ալ զրեթէ մոռ-
ցած: Կը թողում որ հասակաւոր եւ ա-
կանատես մը նկարագրէ զանոնք՝ բոլոր
հետաքրքրական եւ զուարճալի սովորու-
թիւններու մանրամասնութիւններով. եւ
ստուգիլ կ'արժէ լսել ու զիտնալ եւ ապա-
դայ սերունդին անմոռանալի յուշարձան
մը վ'ըլլայ: Իսկ ես կամուրջով մը կ'անց-
նիմ հարսանեաց հանդէսներուն:

Հ. ԱԼԵԿՍԻՍ ՅՈՎՍԷՓԵԱՆ

(Շարունակելի)

Տ Ա Ր Ե Պ Ա Ր Ձ

18 Մայիս 1940 - 18 Մայիս 1957

Ու տասնութն անգամ Մայիսն եկաւ, անցաւ,
Մայիսն իր վարդերով, թռչուններով անթիւ...
Բայց դուն ու ես, մա'յր իմ, նո'յն ցաւին դէմ անբաւ,
Նոյն սուղին մէջ անյլերջ կծկընցանք մեղմիւ...:

Կարծես մեռած չըլլար, կարծես հուրն ահարկու
վայրազ պատերազմին՝ ողջակիզած չըլլար
Հասակն իր բարտիի եւ իր աչքերն աղու,
Բանաստեղծի զոդտրիկ քընարն իր ոսկեւար...:

Մեր չրթներուն վըրայ եւ մեր սրտին կառչած՝
Միշտ իր անունն ունինք քրդի մը պէս անոյշ:
Մեր տան շուքին ինկած՝ իր ըստուերն է առկայծ՝
Որ ամէն պահ կու գայ վերածաղկիլ իբրը յուշ...:

Մեզ հետ վաւրի կարծես, մեր խոկն անհունօրէն
Եւ ամէն պահ կ'ուզենք յանձնել իր յոյգերուն...
Կը լըսենք իր շէշտերն եւ կամ կ'ըսենք իրեն
Ինչ որ անցեալ հրճուանքն ու խինդն էր իր հոգւոյն...:

Մերթ կը խօսինք իրեն Երկրէն մեր լուսածիր,
Ու զիրքերէն՝ որ մեզ հասան հայրենիքէն.
Կռունկներէն՝ որ ա'լ կ'երթան, կու գա'ն արբշիռ,
Քերթուածներէ՝ որոնք ես ձօնած եմ իրեն...:

Կ'ուզենք որ զի'նք յիշեն եղանակներն ամէն,
Կ'ուզենք որ թե'րթ մ'անդամ յիշատակի վարդէն՝
Չըտարարդէն պաղ հովն... Կ'ուզենք բոլոր մարդերն
Անունն իր տան, խօսին անմահ իր երգերէն...:

Ա'խ, տասնութն անգամ Մայիսն եկաւ, անցաւ:
Մայիսի օր մ'այսպէս ան մեկնեցաւ տունէն...
Փունջ մը լեղակ ձեռքիս ես ման կու գամ տալաւ,
Կարօտներու սեմին միշտ գա'յն որոնելէն...:

ՄԱՌԻ ԱԹՄԱՃԵԱՆ